

© Եվրոպայի խորհուրդ/ Մարդու իրավունքների եվրոպական Դատարան, 2013: Սույն թարգմանությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդի (www.coe.int/humanrightstrustfund) աջակցությամբ: Այն որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին: Ավելին իմանալու համար ծանոթացեք սույն փաստաթղթի վերջում ներկայացված հեղինակային իրավունքի վերաբերյալ նշումներին:

© Council of Europe/European Court of Human Rights, 2013. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court. For further information see the full copyright indication at the end of this document.

© Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2013. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour. Pour plus de renseignements veuillez lire l'indication de copyright/droits d'auteur à la fin du présent document.

Դատարանի նախադեպային իրավունքի վերաբերյալ տեղեկատվական նշում թիվ 141

Մայիս 2011

Կոնստան ընդդեմ Հունաստանի - 53466/07

Վճիռ 24.05.2011 [Բաժանմունք I]

6-րդ հոդված

6-րդ հոդվածի 2-րդ մաս

Անմեղության կանխավարկած

Նախարարների կողմից Խորհրդարանի առջև արված հայտարարությունները՝ հայտնի մարդու վերաբերյալ, ով դատապարտվել էր առաջին աստիճանի դատարանի կողմից և այն բողոքարկել էր. Խախտում:

Գործի փաստական հանգամանքները. դիմողն Աթենքի Պանթեոնի համալսարանի դասախոս էր և դրա նախագահը՝ 1990-1995 թվականներին: 1996 թվականին նա նշանակվել էր Մամլո նախարարի ժամանակավոր պաշտոնակատար, իսկ այնուհետև՝ 1997 թվականից մինչև 1999 թվականը՝ Եվրոպայի խորհրդում Հունաստանի լիազոր ներկայացուցիչ: 1998 թվականին քրեական վարույթներ էին սկսվել Համալսարանի դասախոսական կազմի մի քանի անդամների դեմ, ովքեր դրա նախագահը կամ փոխնախագահն էին եղել 1992 թվականից մինչև 1998 թվականը: 2007 թվականին Աթենքի երդվյալ ատենակալների դատարանը դիմողին ու 9 այլ անձանց դատապարտել էր 14 տարվա ազատազրկման հանրային ֆոնդերի յուրացման, պետության դեմ խարդախությունների և միջոցների վատնման համար: Դիմողն անմիջապես բողոքարկել էր և նրա դատապարտման կատարումը կասեցվել էր: 5 օր անց՝ Խորհրդարանում վիճաբանության ընթացքում, Ֆինանսների նախարարի տեղակալը, վկայակոչելով

վիճարկվող վարույթները և հասցեագրելով Սոցիալիստական կուսակցության խորհրդարանական անդամներին, խստիվ քննադատել էր <<Պանթեոնի խարդախներին>>՝ հարցրել էր, թե արդյոք նրանք չեն նրանց նշանակել Մամլո նախարար, Եվրոպայի խորհրդում լիազոր ներկայացուցիչ, երբ Պանթեոնի սկանդալն ի հայտ եկավ, և մասնավորապես ավելացնելով, որ <<Դուք նույնիսկ միմյանցից եք գողանում>>: 2007 թվականի հուլիսին՝ նույնպես Խորհրդարանում բանավեճի ընթացքում, Վարչապետը հղում կատարել սույն գործին՝ որպես աննախադեպ սկանդալի՝ 8,000,000 եվրոյի դիտավորյալ ու պլանավորված վատնում, այդ թվում՝ այն եկամուտների, որոնք կորցրել էր Պանթեոնի համալսարանը: 2008 թվականի փետրվարին Արդարադատության նախարարը Խորհրդարանում հայտարարել էր՝ հասցեագրելով Խորհրդարանի ընդդիմադիր անդամներին. <<Հիշեք Պանթեոնի սկանդալը. Հունաստանի դատարանները խիզորեն ու վճռականորեն դատապարտեցին բոլոր նրանց, ում դուք մշտապես պաշտպանում եք>>:

Այս քրեական գործը մինչև այժմ ընթանում է Աթենքի վերաքննիչ դատարանում:

Իրավունքի հարցեր. 6-րդ հոդվածի 2-րդ մաս

(ա) Ընդունելիությունը. Քաղաքացիական օրենսգրքի 57-րդ հոդվածի ներքո փոխհատուցումը, որը սահմանում է փոխհատուցման հնարավորությունն անձնական իրավունքների խախտման համար, չի կարող ապահովել լիարժեք փոխհատուցում անմեղության կանխավարկածի իրավունքի խախտման համար, որն ընթացակարգային երաշխիք է արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից:

(բ) Գործի էությունը. վարկաբեկող նկատողություններն արտահայտվել են առաջին ատյանում դիմողի դատապարտումից հետո և այն ժամանակ, երն նրա վերաքննիչ բողոքի քննությունն ընթանում էր: Եթե անմեղության կանխավարկածն ավարտվի պարզապես վերաքննիչ բողոքի ներկայացմամբ, որովհետև առաջին ատյանի վարույթները հանգեցրել էին դիմողի դատապարտմանը, ապա դա կհակասի վերաքննիչ վարույթների դերին, որոնցում վերաքննիչ դատարանը պետք է քննարկի իրեն ուղղված որոշումը՝ ինչպես փաստի, այնպես էլ իրավունքի հարցերով: Անմեղության կանխավարկածի սկզբունքը, հետևաբար, կհանդիսանա անկիրառելի այն վարույթներում, որոնցում վերաքննիչ բողոք բերողն ակնկալում է իր գործի թարմ քննարկում և առաջին ատյանի կողմից իր դատապարտման բեկանում: 6-րդ հոդվածի 2-րդ մասը, այնուամենայնիվ, իրավասու մարմիններին չի խոչընդոտում հղում կատարել առաջին ատյանի կողմից դատապարտմանը, քանզի վարույթները շարունակվում են վերաքննիչ դատարանում, բայց յուրաքանչյուր նման հղում պետք է կատարվի համարժեք պահուստով, որը պահանջում է անմեղության կանխավարկածի նկատմամբ հարգանքը: Հաշվի առնելով դիմողի ներգրավվածությունն այս

գործում՝ Հունաստանում դրա լուսաբանման ծավալի հետ մեկտեղ, և հիմք ընդունելով նրա կարգավիճակն ու պաշտոնները, որոնք նա զբաղեցրել է անցյալում, նրա առնչվող՝ նախարարների նկատողություններն այն աստիճան էին, որ բավարար էին նրա հետ նույնականացնելու համար:

(i) Վարչապետի նկատողությունները: Օգտագործելով <<աննախադեպ սկանդալ>> բառերը՝ Վարչապետը միայն ընդհանուր հղում է կատարել գործի առարկային, և այն չի կարող դիտարկվել որպես փորձ կանխորոշելու Վերաքննիչ դատարանի որոշումը:

Եզրակացություն. խախտում առկա չէ (միաձայն):

(ii) Արդարադատության նախարարի և Ֆինանսների նախարարի տեղակալի նկատողությունները: Ինչ վերաբերում է Ֆինանսների նախարարի տեղակալի աներկյիմաստ ու կազուալ բառերին (<<խարդախներ>> և <<դուք նույնիսկ միմյանցից եք գողանում>>), նրանք՝ they were, ի հակադրություն, նմանապես հանրությանը հավաստել են, որ դիմողն անվիճելիորեն մեղավոր է, և թվում է՝ կանխորոշել են Վերաքննիչ դատարանի վճիռը: Ինչ վերաբերում է Արդարադատության նախարարի նկատողություններին, որոնց համաձայն՝ Հունաստանի դատարանները խիզախ ու վճռականորեն դատապարտել են գործին ներգրավված անձանց, դրանք պատասխանատու են այնտպավորության համար, որ այս Նախարարը բավարարված է եղել առաջին ատյանում դիմողների դատապարտմամբ և վերաքննիչ դատարանին խրախուսել է հաստատել այդ վճիռը: Ինչ վերաբերում է Արդարադատության նախարարի գործառույթներին, մասնավորապես՝ քաղաքական իշխանության ներկայացուցչությանը, ով պատասխանատու է դատարանների պատշաճ գործունեության համար, ապա այն բառերը, որոնք նա օգտագործել է, կարծես թե կանխորոշել են վերաքննիչ դատարանի վճիռը: Ի հակադրություն Հունաստանի Կառավարության փաստարկի, այն ժամանակահատվածում, որն ընկած է եղել այս նկատողությունների կատարման և վերաքննիչ դատարանի ապագա որոշման միջև, որոշիչ գործոններ չեն եղել որոշելու համար, թե անմեղության կանխավարկածի խախտում արդյոք եղել է, թե՛ ոչ: Այդ փաստարկն ընդունելու համար պետք է չպատճառաբանված եզրակացության գալ, մասնավորապես՝ որքան երկար է տևում քրեական վարույթը, այնքան անմեղության կանխավարկածի ցանկացած արհամարհում նույն վարույթի ավելի վաղ փուլում կարող է նեղացվել: Այսինքն՝ Արդարադատության նախարարի և Ֆինանսների նախարարի տեղակալի նկատողություններն ավելի հեռուն են գնացել, քան առաջին ատյանի կողմից դիմողի դատապարտումը: Դատարանը հատկապես ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ նկատողությունները կատարվել են բարձրաստիճան պաշտոնյաների կողմից, և նույնիսկ Արդարադատության նախարարի կողմից, ում իշխանությունը՝ իր զբաղեցրած պաշտոնի առումով, պարտադրվում է,

մասնավորապես ցուցաբերել զսպվածություն, երբ մեկնաբանում է դատական որոշումներ:

Եզրակացություն. խախտում (միաձայն):

Դատարանը նաև գտնում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

41-րդ հոդված. 12 000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դատարանի քարտուղարության այս ամփոփումը պարտադիր չէ Դատարանի համար

Սեդմեք այստեղ [Նախադեպերի տեղեկատվական ծանուցումների համար](#)

© Եվրոպայի խորհուրդ/ Մարդու իրավունքների եվրոպական Դատարան, 2013

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պաշտոնական լեզուներն են ֆրանսերենը և անգլերենը: Սույն թարգմանությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդի (www.coe.int/humanrightstrustfund) աջակցությամբ: Այն որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին, որը պատասխանատու չէ թարգմանության որակի համար: Այն կարելի է բեռնել HUDOC-ից՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի տվյալների բազայից (<http://hudoc.echr.coe.int>), կամ տվյալների ցանկացած այլ բազայից, որին HUDOC-ը տրամադրել է փաստաթուղթ: Այն կարող է վերաթողարկվել ոչ առևտրային նպատակներով՝ պայմանով, որ գործի անվանումը ներկայացվի ամբողջական և ուղեկցվի վերը նշված հեղինակային իրավունքի նշումներով, ինչպես նաև Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդին հղումով: Առևտրային նպատակներով սույն թարգմանությունը մասնակիորեն կամ ամբողջապես օգտագործելու դեպքում, հարկ է այդ մասին տեղեկացնել հետևյալ հասցեով՝ publishing@echr.coe.int

© Council of Europe/European Court of Human Rights, 2013

The official languages of the European Court of Human Rights are English and French. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court, nor does the Court take any responsibility for the quality thereof. It may be downloaded from the HUDOC case-law database of the European Court of Human Rights (<http://hudoc.echr.coe.int>) or from any other database with which the Court has shared it. It may be reproduced for non-commercial purposes on condition that the full title of the case is cited, together with the above copyright indication and reference to the Human Rights Trust Fund. If it is intended to use any part of this translation for commercial purposes, please contact publishing@echr.coe.int.

©Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2013

Les langues officielles de la Cour européenne des droits de l'homme sont le français et l'anglais. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour, et celle-ci décline toute responsabilité quant à sa qualité. Elle peut être téléchargée à partir de HUDOC, la base de jurisprudence de la Cour européenne des droits de l'homme (<http://hudoc.echr.coe.int>), ou de toute autre base de données à laquelle HUDOC l'a communiquée. Elle peut être reproduite à des fins non commerciales, sous réserve que le titre de l'affaire soit cité en entier et s'accompagne de l'indication de copyright ci-dessus ainsi que de la référence au Fonds fiduciaire pour les droits de l'homme. Toute personne souhaitant se servir de tout ou partie de la présente traduction à des fins commerciales est invitée à le signaler à l'adresse suivante : publishing@echr.coe.int.